

Տէր-Ահետիքեան ՆԻԿՈՂԱՅՈՍ. «ՏԵՂԱԳՐԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՆԻ», Հրատարակութիւն «Աղբիւր» մանկական ամսաթերթի: Տփխիս, տպ. Ս. Ռոտինեանցի, վոքր քառածալ. 1889 թ., 80 երես, տառ. № 10. գինն է 30 կոպէկ:

Ահա՝ մի գեղեցիկ նկարագրութիւն Արարատեան աշխարհի, Նախիջեանի, Արցախի և Սիսիկ գաւառների. Հեղինակը միանդամանք թափանցել է տեղագրութեան, ժողովրդի վարչ ու բարքի և ընտանեկան սովորութիւնների մէջ. Նա անձամբ անձին ճանապարհորդելով իւր նկարագրած բոլոր տեղերը, ալնպիսի պարզ ոճով, գեղեցիկ հապատառութեամբ և ախորդելի դարձածներով է ներկայացնում ընթերցողի աչքի առաջ հակ աշխարհի ապա ամենահիտաքրքիր մասը, որ մարդ միանդամանք իրան կարծում է հեղինակի հետ ուղեկցելիս, մանաւանդ Սեանակ պատմական չնաշխարհիկ լճի շրջակաքը, Գեղարքունի նահանգը իւր բոլոր գիւղերով, արօտանեղերով և վարելանողերով:

Պ. Տէր-Աւետիքեանը ամենաէն մանրամասնութեամբ նկարագրում է սար գնացող հակերի, քրդերի և թուրքերի փոխաղաք տարաբերութիւնը, լեռնական կեանքը և նոյս բռնած տեղի դրութիւնը:

Պ. Տէր-Աւետիքեանի գրւածքից մենք իմանում ենք մօտաւորապէս ճիշդ մարդաբնակութեան, անաստենների, հողերի պաշտօնական ճշղագուն թըւրքը. Նա տալիս է մեզ իւր մանեկած տեղերի, վանքերի, աւերակների, և կեղեցիների, մանարձանների կենդանի նկարագիրը.

Մի խօսքով, պ. Տէր-Աւետիքեանի դրքովը, որքան և փոքրահասակ-ների համար է, նոյնքան և հարցասիրելի չ չափահասների համար Յանկալի է, որ նա շատ տարածւէր:

Աչքի ընկնող թերութիւններ շատքիչ են, բայց և ակնպէս նկատենք. Ըստ մեզ, 4-րդ երեսի տեղագրական քարտէզի արևելեան և արևմտեան կողմնը շփոթւած են. գիւղեր և տեղեր կան, որոնք փոխանակ արևելքի՝ արևմտագր են դրած. օրինակ, Շիմանմուտը, Զահուկը, աղանահքը. Երես 8-ում կիսով չափաղանցրած են բարդի ծառերի ընթացիկ զները. Արդիօք բանաստեղծական աւելնի արգինք չէ՝ պաւէրժական ձիւնով ծածկած» համարել Արագածի, Աղմաղանի, Աղդաղի գագաթները, ան ինչ նորա նկարագրած երկիրներում Արարատն է միակ մշտաձիւնը. Միւս լեռների ծմակներում հազիւ թէ մնում են փաքր ինչ ձիւնի բեկորներ. Նորերես. Սեանակ լճի համադամ և զարմանազան ձկները, որ, ըստ իւր ասութեան, խկապէս բարօրաւթեան և առեստուրի մեծ ազքիւր է, իրը թէ մնում են տակաւին շատ կողմից լումպէտո, մինչդեռ լաւանի է, որ այդ լճի և ոչ մի ձուկը լումպէտո չի կորչում. Ցաւում ենք նոյնպէս, որ հեղինակը, երես 51, Սեանակ լճի ձկների անունները զացիւ է ամբողջովին հաղորդելու. վիշածներից լի-

տու փոխանակ «և ազն» դելու, պէտք էր վիշել նաև աղջանը, չա-
լածուկը, բօջակը, չուա և ուրիշները,
որոնց ինքը աւելի ձեռնաս էր ի-
մանալու:

Ե հարկէ, աղս ամնենը աչնպիսի

աննշան պակասութիւններ են, որոնք
ոչ մի կերպ չեն սառացնի պ. 8էր-
Աւետիքեանի փոքրիկ գործի իրօք
մեծ արժանաւորութիւնը:

Պ. Պ.

ԳԱԼԵՐԻՑՔԵԱՐԵԱՆ Հ. ԳՐԻԳՈՐԻՅ վ., Մխիթարեան ուխտէ. «ՄՈՄԸ-
ԴՈՐԾՈՒԹԻՒՆ» արդի յառաջադիմութեանը մէջ 21 սոսուերագիծ
պատկերով: ի Վիէննա, Մխիթարեան տպարան, 1889 թ., վոքր քա-
ռածալ, 66 երես, տառ. № 10. զիննէ 25 կոպէկ:

Մաքուր թղթի վերակ գեղեցիկ
սպասծ սոչն գրքողկը առաջին հասո-
րեն է «Արմատագիտական մատնա-
դրան» վերնագրով տպւելիք մի
շարք աշխատութիւնների:

Առաջին մասում խօսում է՝ թէ
ինչ է մոմը, ինչպէս է ստացում,
ժամու՝ մոմի չատկութիւնների, բաղա-
դրութեան ու տեսակների, նորա նեն-
գումն իմանալու, նրան հալեցնելու,
մաքրելու, սպիտակացնելու, թափե-
լու, ճրագ շնելու, ճրագները զար-
դարելու և գումաւորելու մասին.
Երկրորդ մասը աւելի կարճ է և պա-
րանակում է տեղեկութիւններ մեղ-
րամոմի ուրիշ գործածութիւնների
մասին, օրինակ՝ թէ ինչ է ու ինչ
բաղադրութեամբ են բանեցնում ար-

ծաթապործների, ատամների, կօչկի,
շատակի մեղրամոմը և ազն.

Գրւածքի լեզուն մաքուր է, հաս-
կանալի և խրթնաբանութիւններից
ու Վիէններկի մխիթարեաններին լա-
տուկ գրաբարեան խառնակութիւնից
ազատ: Նորահնար հալերէն զիտնա-
կան տէրմիններին կից փակագծում
դրամ են ֆրանսերէն բառերը:

Գրքովկը իւր մէջ պարունակող
ամփոփ ու ձիչդ աեղեկութիւններով
տալիս է լավագուար զաղափար մո-
մագործութեան մասին, որ հետա-
քրքրում է ալժմ առանել կշմբածնի
միաբանութեան, եթէ արդէն չի մո-
ռացել նա մոմի սեպհական գործա-
րան ունենալու մոտադրութիւնը:

Լ. Ա.